

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱԿ

«Հաստատում եմ»

ՎՊՄԻ ռեկտոր \_\_\_\_\_ Գ.Կ.Խաչատրյան

“\_01\_” \_\_06\_\_ 2013թ.

**ԿԱՐԳ**

**ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՂԵԿԱՎԱՐԻ  
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ,  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ**

Ընդունվել է ՎՊՄԻ ՊՈԱԿ գլխխորհրդում  
(արձանագրություն թիվ “\_5\_” 30. 05. 2013թ.)

Վանաձոր-2013թ.

## I. Ընդհանուր դրույթներ

1.1. «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Ինստիտուտ) մագիստրոսական ծրագրի ղեկավարի գիտահետազոտական սեմինարի (այսուհետ՝ ԳՀ սեմինար) կազմակերպման, անցկացման, արդյունքների հաշվառման կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է սույն սեմինարի՝ որպես Ինստիտուտում մագիստրոսական ծրագրերով սովորող ուսանողների գիտահետազոտական աշխատանքի ձևերից մեկի՝ գործառույթները և կազմակերպչական սկզբունքները:

1.2. Սույն Կարգը մշակվել է համաձայն հետևյալ փաստաթղթերի.

- ՀՀ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» գործող օրենքի,
- ՀՀ Կրթության և գիտության նախարարության 2007թ դեկտեմբերի 6-ի №1193-Ն հրամանի,
- մագիստրոսական կրթության պետական կրթական չափորոշիչների,
- Ինստիտուտի ռեկտորի կողմից հաստատված մագիստրոսական կրթական ծրագրերի:

## II. ԳՀ սեմինարի նպատակները և խնդիրները

2.1. ԳՀ սեմինարը մագիստրանտների գիտահետազոտական գործունեության արդյունավետությունը ապահովող կազմակերպչական ձևերից մեկն է:

2.2. ԳՀ սեմինարը անմիջականորեն կապված է մագիստրոսական ծրագրերի հետևյալ բաղադրամասերի հետ.

- մասնագիտական դասընթացներ,
- կրթական հաստատությունների կառավարում,
- մանկավարժական (գիտամանկավարժական) պրակտիկա,

- գիտահետազոտական պրակտիկա,

- գիտահետազոտական աշխատանք:

2.3. ԳՀ սեմինարի նպատակն է՝ մագիստրատուրայի ուսանողների մոտ գիտահետազոտական աշխատանքի կատարման համար անհրաժեշտ կարողությունների և ունակությունների ձևավորումը, կատարված աշխատանքի արդյունքների քննարկումը և ներկայացումը:

2.4. ԳՀ սեմինարի հիմնական խնդիրներն են.

2.4.1. նպաստել մագիստրանտների անհատական պլաններում ամրագրված գիտահետազոտական աշխատանքի պլանավորմանը, կատարմանը, որակի ապահովմանը,

2.4.2. նպաստել մագիստրատուրայի մակարդակին համապատասխանող գիտահետազոտական աշխատանքի կատարմանն ուղղված հետևյալ կարողությունների և ունակությունների ձևավորմանը.

- գիտական հետազոտության թեմայի ընտրության տեսական և գործնական նշանակության և նորույթի հիմնավորում,

- գիտահետազոտական աշխատանքի պլանավորում և անցկացում, արդյունքների քննադատական վերլուծություն և ամփոփում,

- գիտական հետազոտությունների միջանկյալ արդյունքների ներկայացում,

- գիտական հետազոտությունների արդյունքների բանավոր և գրավոր ներկայացում (պրեզենտացիա, ռեֆերատ, գրական տվյալների վերլուծության կազմում, գրախոսական, զեկուցում, էլույթ, թեզիսներ, գիտական հոդված),

- գիտական հոդվածների, զեկուցումների կամ այլ նյութերի տեսքով դրանց ձևակերպում և ներկայացում,

- ապագա մագիստրոսի գործունեության մասնագիտական ոլորտի և գիտահետազոտական աշխատանքի անմիջական կապի ապահովում:

2.5. ԳՀ սեմինարի հիմնական գործառույթներն են.

- դաստիարակող - ԳՀ սեմինարը պետք է նպաստի մագիստրանտների՝ գիտական գործունեությամբ զբաղվելու համար անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների, հմտությունների, կոմպետենցիաների, անձի որակների ձևավորմանը,
- սովորեցնող - ԳՀ սեմինարը պետք է սովորեցնի մագիստրանտներին պլանավորելու գիտահետազոտական գործունեությունը, հաջորդաբար, նախապես մշակված պլանով կատարելու նախատեսած աշխատանքները, ներկայացնելու աշխատանքի արդյունքները գրավոր և բանավոր տեսքով,
- զարգացնող - ԳՀ սեմինարը պետք է զարգացնի ուսանողների գիտական գործունեությունն իրականացնելու ընդունակությունները, նրանց կազմակերպչական կարողությունները,
- վերահսկող - ԳՀ սեմինարը պետք է վերահսկի մագիստրանտների գիտահետազոտական աշխատանքի կատարումը, որոշի այդ աշխատանքի կատարման որակը, որոշում կայացնի աշխատանքը նախապաշտպանության և պաշտպանության ներկայացնելու մասին:

### **3. ԳՀ սեմինարի կազմակերպման և պլանավորման կարգը**

3.1. Տվյալ մագիստրոսական ծրագրի ԳՀ սեմինարի ղեկավար է նշանակվում մագիստրոսական ծրագրի ղեկավարը, կամ Ինստիտուտի այն աշխատակիցներ, որոնք հանդիսանում են մագիստրատուրայի ուսանողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարներ:

3.2. ԳՀ սեմինարներին տրամադրած լսարանային ժամերը հաշվառվում են այն իրականացնող դասախոսների (մագիստրոսական ծրագրերի ղեկավարների, մագիստրատուրայի ուսանողների գիտական ղեկավարների) հիմնական ուսումնական ծանրաբեռնվածությունում:

3.3. ԳՀ սեմինարն անցկացվում է համաձայն յուրաքանչյուր մագիստրոսական ծրագրի հաստատված ուսումնական պլանի: Այն ներառում է լսարանային ժամեր և ուսանողների ինքնուրույն աշխատանք:

3.4. ԳՀ սեմինարներն ընդգրկվում են ուսումնական պարապմունքների դասացուցակներում:

3.5. ԳՀ սեմինարը պլանավորվում է ուսումնառության ամբողջ շրջանի՝ մագիստրոսական յուրաքանչյուր ծրագրի համար առանձին, երկու ուսումնական տարվա համար (մագիստրատուրայի 1-4 կիսամյակներ), շաբաթական երկու ակադեմիական ժամ ծավալով: Լսարանային ժամերի և ուսանողների ինքնուրույն աշխատանքի հարաբերակցությունը պետք է կազմի 25:75:

ԳՀ սեմինարի աշխատանքային բեռնվածքը համապատասխանում է 8 կրեդիտային միավորի:

3.6. ԳՀ սեմինարի պլանի և ծրագրի (հավելված 1) նախագծերը մշակվում և քննարկվում են թողարկող ամբիոնում՝ ամբիոնի վարիչի, մագիստրատուրայի ուսանողների գիտական ղեկավարների, առաջատար դասախոսների, մագիստրոսական ծրագրի ղեկավարի մասնակցությամբ: Թողարկող ամբիոնի նիստում քննարկելուց հետո դրանք ներկայացվում են ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին՝ հաստատելու համար:

3.7. ԳՀ սեմինարի պլանը և ծրագիրը պետք է հաստատվեն մինչև ընթացիկ ուս. տարվա հոկտեմբերի 30-ը:

3.8. ԳՀ սեմինարի պլանի նախագիծը պետք է պարունակի հետևյալ տեղեկություններ.

- տեղեկություններ ԳՀ սեմինարի ղեկավարի մասին (ազգանուն, անուն, հայրանուն, գիտական աստիճան, գիտական կոչում, նշանակալի վերջին տպագիր աշխատանքները),
- սեմինարի թեմատիկան և անցկացման մոտավոր ժամկետները,
- անցկացման ձևերը,
- առաջարկներ մագիստրանտներին՝ ԳՀ սեմինարին նախապատրաստվելու համար,
- պլանում նշված ԳՀ սեմինարի յուրաքանչյուր բաղադրիչի բովանդակության նկարագրությունը:

3.9. Հաստատելուց հետո դասախոսները և մագիստրանտները տեղեկացվում են ԳՀ սեմինարի պլանների մասին: Անհրաժեշտ տեղեկատվությունը տեղադրվում է նաև Ինստիտուտի կայքէջում:

3.10. Ուսանողի համար ԳՀ սեմինարին մասնակցելը պարտադիր է: Հաճախելիությունը նշվում է մատյանի մեջ և հաշվառվում է համաձայն Ինստիտուտում գործող համապատասխան կարգի:

#### **4. ԳՀ սեմինարի անցկացման ձևերը**

4.1. ԳՀ սեմինարի անցկացման հիմնական ձևերն են.

##### **4.1.1. Մագիստրոսական ատենախոսության կատարում և քննարկում**

Մագիստրոսական ատենախոսությունը նախապատրաստվում, քննարկվում և վերջնական տեսքի է բերվում ԳՀ սեմինարի շրջանակներում:

##### **4.1.2. Կուրսային աշխատանքի կատարում**

Կուրսային աշխատանքը հանդիսանում է մագիստրոսական ատենախոսության կատարման միջանկյալ ձևը և կատարվում է մագիստրատուրայի երկրորդ կիսամյակում: Որպես կանոն, կուրսային աշխատանքների թեմաները պետք է համապատասխանեն մագիստրոսական ատենախոսության թեմաներին:

##### **4.1.3. Ռեֆերատի կազմում և ներկայացում**

Ռեֆերատը գրավոր աշխատանք է, որն իրենից ներկայացնում է գրական աղբյուրների վերլուծություն՝ մագիստրոսական ատենախոսության թեմայով: Այն ներկայացվում է ԳՀ սեմինարի ընթացքում՝ բանավոր զեկուցման ձևով, և ընգրկվում է մագիստրոսական ատենախոսության տեսական բաժնում:

##### **4.1.4. Հետազոտության թեմայի հիմնավորում**

Հակիրճ ամփոփագրի ձևով ներկայացվում է մագիստրոսական ատենախոսության թեմայի հիմնավորումը՝ հետազոտության արդիականությունը, նպատակը, ինդիքները, առարկան, տեսական և մեթոդաբանական հիմքերը, հետազոտության մեթոդները, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև աշխատանքի կառուցվածքը (բաժինները և ենթաբաժինները):

Ուսանողը ներկայացնում է ատենախոսության հիմնավորումը ԳՀ սեմինարի ժամանակ, առաջին կիսամյակի վերջում:

##### **4.1.5. Մագիստրոսական ատենախոսության թեմայով զեկուցման նախապատրաստում և ներկայացում**

Մագիստրոսական ատենախոսության թեմայով զեկուցման, թեզիսների, կամ հոդվածի նախապատրաստում՝ ԳՀ սեմինարի շրջանակներում անցկացվող նիստերի, կլոր սեղանների, ուսանողական գիտական կոնֆերանսների ժամանակ ներկայացնելու համար, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, հոդվածների նախապատրաստում և ներկայացում ՝ Ինստիտուտի գիտական աշխատությունների ամենամյա ժողովածուներում տպագրելու համար:

##### **4.1.6. Պրեզենտացիաների նախապատրաստում**

Էլեկտրոնային տեքստով, Power Point համակարգչային ծրագրի օգնությամբ, նախապատրաստվում են պրեզենտացիաներ, որտեղ ներկայացվում են անցկացվող հետազոտության միջանկյալ կամ վերջնական արդյունքները, դրանց վերլուծությունը:

#### **4.1.7. Մագիստրոսական ատենախոսության պաշտպանության ելույթի նախապատրաստում**

Ուսանողը ԳՀ սեմինարին է ներկայացնում մագիստրոսական ատենախոսության պաշտպանության համար նախապատրաստած իր ելույթը:

#### **4.2. ԳՀ սեմինարի ղեկավարի դասախոսություններ (1 կիսամյակ, 2 կրեդիտ)**

Մագիստրատուրայի առաջին կիսամյակում ԳՀ սեմինարի ղեկավարը ներկայացնում է մասնագիտական կողմնորոշմանն ուղղված դասախոսություններ՝ նվիրված տվյալ գիտության գիտական հետազոտությունների հնարավոր ուղղություններին, մագիստրոսական ատենախոսությունների թեմատիկային, գիտահետազոտական աշխատանքի կազմակերպման և անցկացման ձևերին, սեփական փորձին ծանոթացնելուն, ինչը կօգնի ուսանողներին ընտրելու մագիստրոսական ատենախոսության և կուրսային աշխատանքի թեմաները, ինչպես նաև առաջին կիսամյակի վերջում կազմելու այդ աշխատանքների պլանները:

#### **4.3. Պարապմունքներ՝ նվիրված հետազոտությունների անցկացման կազմակերպմանը և մեթոդաբանությանը, ակադեմիական և տեղեկատվական-վերլուծական աշխատանքների իրականացմանը**

ԳՀ սեմինարի ղեկավարը, ինչպես նաև Ինստիտուտի այլ դասախոսներ, ներկայացնում են դասախոսություններ, կամ գործնական պարապմունքներ՝ նպատակ ունենալով սովորեցնել ուսանողներին ճիշտ պլանավորել հետազոտական աշխատանքները, առկա մեթոդիկաներից արդյունավետ ընտրություն կատարել, ստեղծագործական մոտեցում ցուցաբերել կատարվող աշխատանքների նկատմամբ:

Պարապմունքների ընթացքում մագիստրանտներին բացատրվում են նաև տեղեկատվական-որոնողական աշխատանքների կատարման սկզբունքները, ներկայացվում են տեղեկատվական խոշոր ռեսուրսները (տպագիր և էլեկտրոնային), դրանց հետ աշխատելու ձևերը և մեթոդները:

Առանձին դասախոսություններ են նվիրվում ուսանողների՝ ուսումնական գրավոր աշխատանքներ (ռեֆերատներ, կուրսայիններ, ավարտական որակավորման աշխատանքներ ) և ակադեմիական նյութեր (հոդվածներ, թեզիսներ, գիտական այլ աշխատություններ) կազմելու ունակությունների և կարողությունների ձևավորմանը:

**4.4. Պարապմունքներ՝ նվիրված գիտական բանավեճերի, պրեզենտացիաների, քննարկումների անցկացման մեթոդիկաներին**

ԳՀ սեմինարի ղեկավարը, ինչպես նաև Ինստիտուտի այլ դասախոսներ, տվյալ պարապմունքների ընթացքում ներկայացնում են գիտական հաղորդակցման վերոնշյալ ձևերին նվիրված դասախոսություններ և գործնական պարապմունքներ, որոնց ընթացքում կոնկրետ օրինակների քննարկման միջոցով բացատրում են գիտական հաղորդակցման ձևերը և մեթոդները, դրանց սկզբունքները, անդրադառնում են գիտական էթիկայի և մշակույթի խնդիրներին:

âââ



5. Մագիստրոսական ատենախոսության նախապատրաստման փուլերը և ԳՀ սեմինարի ձևերը

Ուսումնա- ռության տարի	Կիսամյակ	Մագիստրոսական ատենախոսության կատարման փուլերը	ԳՀ սեմինարի ձևերը	Հատ- կացվող կրեդիտային միավորը	Ստուգման ձևը
1	1	-Մագիստրոսական ատենախոս. թեմայի ընտր. և հիմնավորում, -Կուրսային աշխատանքի պլանի կազմում և քննարկում	-Մասնագիտական կողմնորոշմանը նվիրված դասախոսություններ	2	1. Մագիստրոսական ատենախոսության պլանի ներկայացում (գրավոր տեսքով) 2. Կուրսային աշխատանքի թեմայի ներկայացում
	2	-Մագիստրոսական ատենախոսության թեմային համապատասխանող գիտական գրականության որոնում, վերլուծության կազմում՝ ռեֆերատի ձևով, -կուրսային աշխատանքի նախապատրաստում և պաշտպանություն	- ուսումնական գրավոր աշխատանքներ և ակադեմիական գրավոր նյութեր գրելու կարողությունների և հմտությունների ձևավորմանն ուղղված պարապմունքներ	3	1. Ռեֆերատի պաշտպանություն 2. Կուրսային աշխատանքի պաշտպանություն

2	3	Աշխատանքներ մագիստրոսական ատենախոսության թեմայով (այդ թվում նաև գիտամանկավարժական պրակտիկայի ընթացքում)	1. Տվյալների հավաքագրում: Փորձարարական աշխատանքների կատարում, ստացած տվյալների կարգավորում և վերլուծություն 2. Լրացուցիչ փորձարարական աշխատանքների կատարում, արդյունքների վերլուծություն և ամփոփում	3	1. Հաշվետվություն կատարած փորձարարական աշխատանքների վերլուծության մասին (զեկուցման, Power Point-ով ներկայացվող պրեզենտացիայի ձևով)
2	4	Մագիստրոսական ատենախոսության նախապատրաստում	1. Մագիստրոսական ատենախոսության տեքստի նախապատրաստում 2. Մագիստրոսական ատենախոսության պաշտպանություն	2	1. Պաշտպանության զեկուցման նախապատրաստում 2. Թողարկող ամբիոնում նախապաշտպանության անցկացում՝ ԳՀ սեմինարի ղեկավարի մասնակցությամբ

## **6. Ուսանողների գիտահետազոտական գործունեության ատեստավորումը**

6.1. ԳՀ սեմինարի ամփոփիչ ատեստավորումը կատարվում է ստուգարքների ձևով: ԳՀ սեմինարից պարտքը հանդիսանում է սովորական ակադեմիական պարտք և մարվում է համաձայն Ինստիտուտում գործող համապատասխան կարգի:

6.2. Ստուգարք ստանալու համար ուսանողը պետք է ներկայացնի.

1 կիսամյակում՝

- մագիստրոսական ատենախոսության թեմայի ընտրության հիմնավորումը (գրավոր),

- կուրսային աշխատանքի պլանը (գրավոր),

2 կիսամյակում

- կուրսային աշխատանքի տեքստը՝ տեսական նյութերի ռեֆերատի հետ միասին,

3 կիսամյակում

- հետազոտության արդյունքները և դրանց վերլուծությունը (գրավոր)՝ փորձարարական մաս պարունակող ատենախոսությունների համար,

- հետազոտության արդյունքներին նվիրված զեկուցման տեքստը

4 կիսամյակում

- մագիստրոսական ատենախոսության տեքստը:

6.3. Ներկայացված յուրաքանչյուր աշխատանքի վրա պետք է լինի ԳՀ սեմինարի ղեկավարի (մագիստրոսական ծրագրի ղեկավարի) ստորագրությունը:

6.4. Ուսանողների բոլոր հաշվետու նյութերից կազմվում է ուսանողի ակադեմիական պորտֆոլիոն, որը պահվում է (էլեկտրոնային և թղթային տարբերակներով) թողարկող ամբիոնում 3 տարի ժամկետով:

## **7. Ուսանողների գիտահետազոտական գործունեության գնահատումը**

Մագիստրատուրայի ուսանողների գիտահետազոտական աշխատանքի գնահատումը կատարվում է յուրաքանչյուր կիսամյակում, ստուգարքների ձևով:

Գնահատման համար ուսանողները պետք է ներկայացնեն.

1-ին կիսամյակում.

- մագիստրոսական ատենախոսության թեմայի հիմնավորում,

- կուրսային աշխատանքի թեմայի հիմնավորում և պլան:

2 կիսամյակում.

- կուրսային աշխատանքի տեքստը՝ ներառյալ ռեֆերատը (որպես կուրսային աշխատանքի տեսական մաս):

3 կիսամյակում.

- հաշվետվություն կիսամյակում կատարած աշխատանքների մասին:

4 կիսամյակում.

- մագիստրոսական ատենախոսության տեքստի ներկայացում:

## **8. ԳՀ սեմինարի աշխատանքներում մասնակցող անձանց պարտականությունները և գործառույթները**

### **8.1. ԳՀ սեմինարի ղեկավարի պարտականությունները և գործառույթները**

ԳՀ սեմինարի ղեկավարը.

- անմիջականորեն մասնակցում է ԳՀ սեմինարի հայեցակարգի, ծրագրի և պլանի մշակմանը, թողարկող ամբիոնի նիստին դրանց քննարկմանը և հաստատմանը,

- կատարում է իր աշխատանքային պլանով սահմանված ԳՀ սեմինարի ծրագրին համապատասխանող ուսումնական աշխատանքները,

- վերահսկում է ԳՀ սեմինարի պլանով նախատեսված աշխատանքների կատարումը, ուսանողների աշխատանքի գնահատումը:

### **8.2. ԳՀ սեմինարի անդամը**

ԳՀ սեմինարի անդամ կարող են լինել թողարկող ամբիոնի այն դասախոսները, որոնք մագիստրատուրայի ուսանողների գիտական ղեկավարներն են:

ԳՀ սեմինարի անդամը սեմինարի ղեկավարի առաջադրանքով կատարում է հետևյալ գործառույթները.

- մասնակցում է ԳՀ սեմինարի հայեցակարգի ձևավորմանը,

- մասնակցում է ԳՀ սեմինարի պլանի և ծրագրի մշակմանը,
- մասնակցում է ԳՀ սեմինարի աշխատանքներին՝ կատարելով ԳՀ սեմինարի կողմից առաջարկվող աշխատանքներ,
- ներկայացնում է առաջարկներ՝ ԳՀ սեմինարներին ուսանողների կատարած աշխատանքները գնահատելու համար:

### 8.3. Մագիստրոսական հիմնական կրթական ծրագրի ղեկավարը.

- գնահատում է ԳՀ սեմինարի բովանդակային մասը, հաստատում է դրա հայեցակարգը, պլանը և ծրագիրը:

Մագիստրոսական հիմնական կրթական ծրագրի ղեկավարն ապահովում է տվյալ ուղղվածության ԳՀ սեմինարների ընդհանուր ղեկավարությունը: Նրա հիմնական գործառույթն է՝ վերահսկել ԳՀ սեմինարի բովանդակության համապատասխանումը տվյալ ուղղվածության կրթական ծրագրին, ինչպես նաև այդ ծրագրով ամրագրված կոմպետենցիաների ձևավորմանը:

### 8.4. Թողարկող ամբիոնի վարիչը.

- կարող է ղեկավարել ԳՀ սեմինարը, կամ մասնակցել սեմինարի աշխատանքներին՝ վարելով ԳՀ սեմինարի ծրագրով նախատեսված ուսումնական պարապմունքներ,
- անհրաժեշտության դեպքում աջակցում է ԳՀ սեմինարի կազմակերպչական հարցերի լուծմանը, ներկայացնում է առաջարկներ ԳՀ սեմինարի անցկացման և ծրագրերի բովանդակության վերաբերյալ,
- պատասխանատու է մագիստրատուրայի ուսանողների ակադեմիական պորտֆոլիոների պահպանման համար (ժամկետը՝ 3 տարի):

### 8.5. Ակադեմիական խորհրդատուն (թյուրորդ).

- պետք է տեղյակ լինի ԳՀ սեմինարի գիտական ուղղվածության, պլանի և ծրագրի մասին: Այս տեղեկությունները ակադեմիական խորհրդատուն պետք է հայտնի ուսանողներին ուսման առաջին կիսամյակում, մինչև հոկտեմբերի 1-ը: